

## ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԵԱՆ

Առտուած արեալ Ս. Հայրապետի Գերագահ Աթոռոյն արքայ էջմիածնի, Տեառն Մկրտչի եղբայրական սիրոյ և յարգանաց ողջունիւ պատասխանեմք Կոնդակին տուելոյ ի 19 սեպտեմբերի ներկայ ամի և ընդ համարաւ 1157:

Ի նկատ առեալ Սրբութեան Ձերում՝ զբազմաթիւ խնդրագիրս հայ ժողովրդականաց Ռուսիոյ, Տաճկաստանի, Պարսկաստանի և այլոց տեղեաց և ի բազմաթիւ այրիացեալ քահանայից ի մտանել յերկրորդ ամուսնութիւն մանաւանդ խանդավատեալ ընդ ողորմ վիճակ որբոց զրկելոց ի խնամատարութենէ մարց և ի մէջ ժողովրդոց ընդ անհրապոյր կեցութիւն այրիացելոցն՝ համարիք զխնդիր միանգամայն ժամանակակից, յոյժ ծանրակշիռ և համազգային, վասն որոյ պատուէր տայք խառն ի հոգևորականաց և յաշխարհականաց ժողովս կազմել յաշխարհին Կիլիկեցւոց ընդ մերով նախագահութեամբ և վիճակաւորաց և զխնդիրն կրկնամուսնութեան յանձնել ի խորհրդակցութիւն և զարգիւնս քննութեան առաջի առնել Վեհիգ:

Առ ի մէջ բերելոյ զպատճառս արգելանաց կրկնամուսնութեան քահանային չեն պէտք ընդերկար թարթափանաց ի Ս. Գիրս յեկեղեցական հռչականուն մատենագիրս մերձաժամանակ Առաքելոց և ի սահմանադրութիւնս տիեզերական մասնաւոր և Ազգային ժողովոց, որոց ամենեցուն գիտակ էք Ձերով իմաստութեամբ, համարձակիմք ասել եթէ պատճառաբանութիւնքն. — Կարօտութիւն խնամատարութեան որբոց, անհրապոյր վիճակ այրիացելոցն ի մէջ ժողովրդեան և խորշումն ի նոցանէ ժողովրդականաց չեն բաւական իրաւունս շնորհելոյ կրկնամուսնութեան և խրամատելոյ զօրէնսդրական կազմակերպութիւն Սրբոյ Եկեղեցւոյ վասն զի եթէ զաւակունք այրիացեալ քահանայից մեան կարօտ մայրական խնամատարութեան մեան և զաւակունք այրիացեալ ժողովրդականաց, յորոց բազումք

ոչ կամին մտանել յերկրորդ ամուսնութիւն:

Եթէ անհրապոյր իցէ վիճակ այրիացեալ քահանայից ի մէջ ժողովրդոց, այլ քանի՞սն ևս կուսակրօնից, սակայն յաստին հրաւերս միշտ նախաթող բազմին և ոչ ոք ի ժողովրդականաց յանպատշաճից համարի գտանել նոցա ընտանեկան խրախճանս:

Եթէ խորշին ժողովրդականք յայրիացեալ քահանայից, խորշել պարտ էր ի կուսակրօնից, առաւել ևս յաշխարհիկ ամուրեաց, որք ազատ և անխտիր մուտ և ելս առնեն ի տունս պատրուակաւ բարեկամութեան այլ չարիք և եղծմունք ընտանեկան սրբութեան և պատուոյ անբաժան են յայդպիսի յարաբերութեանց:

Թէպէտեւ ի բազմութիւ կողմանց աշխարհիս դիմեալ են առ Վեհդ սակայն տուն Կիլիկեցւոց չէ յաննշանից ի յիշատակեալ մարդից: Այս չորս ամ են, յորմէ հետէ ամբարձեալ կամք ի գահ Հայրապետութեան մեծի տանն Կիլիկիոյ, ուր բազումք են ի քահանայից այրիացեալ և մանկունք նոցին զրկեալ ի խնամոց մարց և ի տնկալուջ կանանց, այլ ոչ ոք ի նոցանէ և ոչ ի ծխականաց ածեալ է զմտաւ զայսպիսի մեզ առնել առաջի զխնդիր, վասնորոյ եթէ ըստ առաջադրութեան արկցուք ընդ ժողովական քննութեամբ, մեք ինքնին հանդիսանալոց եմք դրդիչ և և թելադրիչ այդպիսի տարականոն խորհրդոց և մտաց:

Եկեացուք արդ հաւանական անցիցն, որք կարեն դիպիլ յետ վախճանական վճռահատութեան ի մտանել այրիացեալ քահանայից յերկրորդ ամուսնութիւն: Իցէ ոք երաշխաւոր եթէ որ մտանենն ի կրկին պսակ ընդ երկար վայելելոց են ի նմին կենակցութեան, վերահաս և անակնունելի մահ անդրէն դարձուցանէ զվիճակ նոցին անհրապոյր և զզաւակունս նոցին թողու կարօտ խնամոց: Զինչ ինչ պէտք են յայնժամ կրկնակի այրիացելոցն, երթալ մտանել ի ծերպս և յանկիւնս վանօրէից, եթէ խնդրարկու լինել երրորդ ամուսնութեան:

Առօրեայ փորձառութիւն և աստին կենցաղավարութիւն ոչ ընծայեն հաւաստիս, եթէ որբացեալ մանկտիք



արժանասցին մայրական գթալիր խնամոց, քան մանաւանդ հանապազօր զրկեալ խոշտանդեսցին ի մօրուէն, կագ և կռիւք յաճախեալ ի մէջ համահայր, այլ ոչ համամայր զաւակաց զյարկ ընտանեկան դարձուցեն ի դժոխս և զցանկալին խաղաղութիւն վտարական հալածեսցին:

Եթէ շնորհեսցի իրաւունս այրիացեալ քահանայից, մտանել յերկրորդ ամուսնութիւն, բարձցի ապա և այս կանոն երանաշնորհ նախնեաց, որով կրկնամուսին արժանաւորք և զաւակունք կրկնամուսնութեան արգելեալ մնան ի ձեռնադրութենէ քահանայութեան, և միւսն, որով հրամայի յետ ամուսնութեան դալ ի կոշումն քահանայութեան: Զնշեսցին ապա «Տէր» և «Հայր» յարագրեալ բառքդ յանուն քահանայից, զի չիք յօրէնս ազգաց, հարցն մտանել յամուսնութիւն ընդ դստերս մարմնաւորս կամ ընդ հոգւորս: Եթէ միակին պաշտօնէութիւն սրբոյ եկեղեցւոյ յինչ պէտս կացցէ և մնացցէ կուսակրօնութիւն, ոյր վիճակ առաւել ևս անհրապոյր և խոտելի է յաշս նորուսումն լայնախոհից և առաւել ողորմ ի դէպս տկարութեան:

Զատագովք վերամուսնութեան կարծեն պատուարս կանգնիլ ընդդէմ բարոյական անկման, այլ վնդ ջատագովութեանս, ոչ գիտեն, զոր խօսինն և գրեն, զի ի լուր աշխարհի հռչակ հարկանեն, եթէ յետ այնքան դարուց չե ևս է արմատացեալ ի մեղ բարոյականութիւն աստուածապարգև կրօնին և ոչ ի պաշտօնեայս նորին: Եթէ կեանք ամուսնականը գրաւականը են անդրժեքիք ողջախօհ վարուց և գնացից, ընդէր ապա և բազումք յամուսնացելոց զհետ լինին օտարին տալ դրժել զուխտն հաւատարութեան և սրբութեան: Երանաշնորհ նախնիք մեր օրինօք և սահմանադրութեամբ ջան ի գործս աշխատ եղեն զարմատախիլ առնել զանբարոյ կեանս նորոգ դարձելոցն ի հեթանոսութենէ և որդիք քրմացն իսկ պատկառ կացին օրինացն, այլ աւանդ մեք ի նոյն դառնամք անդրէն:

Այս ամենայն զգայամոլութեանց և զգայամոլից յաճախութիւն ի պաշտօնէութեան Ս. Եկեղեցւոյ՝ արգասիք են եպիսկոպոս զօշաքաղութեան և արհամարհանաց, որով

անցեալ եւք զսահմանօք ձեռնադրութեան նախնեաց մե-  
րոց: Որչափ բաղմասցին ի մեզ մատղատունկ նուիրեալք  
ի կուսակրօնութիւն և ի քահանայութիւն և որչափ յա-  
րատեեսցէ ի մեզ օգի սիմոնականութեան, այնչափ առա-  
տասցին չարիք և եկեղեցի մեր սուրբ նսեմացեալ խըրթ-  
նասցի:

Այսու պատասխանադրութեամբ համարելով զմեզ  
անպարտ կաղմալութեան հայրենաւանդ օրինաց և  
կարգաց, զառաւելն թողումք ի կամս Վեհիգ:


Մաղթելով Վեհիգ զօրանալ Տէրամբ ի շինութիւն  
եկեղեցւոյ և ի մխիթարութիւն հաւատացելոց՝

Մնամ խոնարհ աղօթող

Սահակ կարսղիկոս Կիլիկիոյ

1906 Նոյ. 2

Ի Մայրաքանա Սսոյ



Վեհաշնորհ և Արքագան Հայրապետից մերոյ և  
Մեծի Եպիսկոպոսապետից Տ. Տ. Մկրտչի, Կաթողիկոսիգ  
Ամենայն Հայոց, մատչիմք ի խոնարհ համբոյր Սուրբ  
Աջոյն նախագահ և անդամակիցքս Կրօնական Ժողովոյ  
Ազգային Կեդրոնական Վարչութեան Պատրիարքութեան  
Հայոց Թուրքիոյ.

Տուեալ էիք կոնգակ յատուկ յ12 Սեպտեմբերի տար-  
ւոյս ընդ 1155 համարաւ, և ծանուցեալ էիք այնու թէ  
ընկալեալ դուով Ձեր ի կողմանց կողմանց գիրս խնդրուածոց  
ի քահանայից և յաշխարհականաց և լուեալ զթշուառ կացու-  
թիւն այրիացեալ քահանայից, անօգնական և անտէրունջ  
մնացելոց հանգերձ զաւակօք, և գթացեալ Ձեր ի վերայ  
սոյնպիսեաց, առեալ էիք ինկատ զխնդրունս կրկին ամուս-  
նութեան նոցա, և յանձն առնէիք Կրօնական Ժողովոյ  
Պատրիարքութեանս, եթէ հարկ լիցի լսելով իսկ զկարծիս  
թեմակալ Առաջնորդաց և Գաւառական Ժողովոց, քննել